փոխպդարձ օգնությունը հեշտացնելու նպատակով։ Այն նախապես գիտակցորեն մշակված պլանով չի կառուցվել, այլ գոյացել է դարերի ընթացքում, ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ և լրացրել է պաշտպանության համար օգտագործվող ժայռագագաթներին կառուցած դիրքերի ու բարանձավների ցանցը[35]։

Սյունիքի հարավ-արևելյան մասի պաշտպանական համակարգը բաղկացած էր մի քանի պաշտպանական գոտիներից։ Նրանցից մեկը գտնվում էր Բարկուշատ գետի ձախ ափին, որի մեջ մտնում էին Բորոտան, Բզեն, Բարկուշատ բերդերը։ Նրան էր միանում Քաշունի գետի ձախ ափով անցնող ճանապարհը՝ իր երկայնքով կառուցված ամրություններով։ Պաշտպանական մեկ այլ գիծ էին ներկայացնում Տաթև—Բաղաբերդ ճանապարհին կառուցված բերդերը, որոնք կապվում էին Քաշունի և Ողջի գետերի ձախափնյա ամրությունների շարքին։ Ընդ որում Բաղաբերդ, Կկոց քար, Աչաղվա ամրությունները կարող էին միաժամանակ համարվել ինչպես Տաթև—Բաղաբերդ գծի, այնպես էլ Ողջի գետի ձախափնյա գոտու բերդեր։ Գեղիի աջ ափին կառուցված Գեղի, Ողջի գետի վերին հոսանքների շրջանում գտնվող Ելորուտ և այդ գետերի ջրախառնման անկյունում գտնվող Զեռու բերդերը, որոնք փոքրիկ Զորք գավառում էին[36], պաշտպանում էին Բաղաբերդը հարավից և Տաթև—Բաղաբերդ պաշտպանական գծի շարունակությունն էին կազմում։ Ռազմաշինությունների մեկ այլ շարք գտնվում էր Կովսական գավառի տարածքում։ Նրա մեջ էին մտնում Կապան քաղաքը, Բերդաքար, Կռնաս, Գոնարի բերդ ամրությունները։ Այս գոտին կապված էր Արևիքի գավառում Արաքսի ձախ ափին կառուցված Կարճևան, Մեղրի, Կադիր կալասի բերդերի հետ[37]։

Հիշյալ պաշտպանական գոտիները անկասկած միանում էին Սյունիքի մյուս գավառների տարածքում գտնվող ռազմաշինություններին՝ ամբողջացնելով նահանգի պաշտպանական համակարգը։

Ա. Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

35 Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 40։ Սասանյանների տիրապետության օրոք Սյունիքում պաշտպանական ամրություններ կառուցել են նաև պարսիկ արքաները։ Խոսրով I Անուշիրվան (531—578) թագավորին է վերագրվում Սյունյաց Շահապոնից, Վայոց, Դիլաբ բերդերի կառուցումը (Բալաձորի, Հայաստանի նվաճումը, տե՛ս Գ. Խալաթյան, Արարատի մատենագրեր Հայաստանի մասին, «Հանդես ամսօրյա», 1903, № 4, էջ 125)։ Պարսկական արքունիքի կողմից Սյունիքի պաշտպանության ապահովումը բացատրվում է Անդրկովկասում վերջինիս ունեցած ուրույն աշխարհագրական դիրքով։ (Տե՛ս С. Еремян, Сюния и оборона Сасанидами Кавказских проходов, «Известия АрмФАНа», 1941, № 7 (12), էջ 33—40)։

36 Թ. Հակոբյան, Սյունիքի թագավորություններ, էջ 108—112։

37 Կարճևան, Մեղրի և Կադիր կալասի բերդերը գտնվում էին միևնույն ուղղության վրա, Կարճևանը և Մեղրին՝ միմյանց մոտ, իսկ Կադիր կալասին՝ բավական հեռու։ Կարճևան և Մեղրի բերդերի միջև եղած հեռավորությունը նկատի ունենալով կարծում ենք, որ Մեղրի և Կադիր կալասի բերդերի միջև, միևնույն գծի վրա, ևս երկու բերդ է եղել, որը հնարավոր կլինի ճշտել ապագայում, տեղանքի ուսումնասիրության միջոցով։

ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Ախուրյանի ջրամբարի կառուցման կապակցությամբ, այդ տարածքում մնացող նախնադարյան ժամանակաշրջանի հնագիտական հուշարձանները հետազոտելու և ոչնչացումից փրկելու նպատակով, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի նախնադարյան ժամանակաշրջանի հուշարձաններն ուսումնասիրող ջոկատը 1977 թ. պեղումներ սկսեց Շիրակավան գյուղի մոտ գտնվող բնակատեղիում ու նրան կից դամբարանադաշտում։ Աշխատանքների ընթացքում, որոնք շարունակվեցին նաև 1978 թ., պեղվեցին 34 դամբարան և բնակավայրից առանձին հատվածներ, որոնք ուրվագծում են Շիրակավանի տարածքի նախնադարյան բնակիչների անցած պատմական ուղին մ. թ. ա. III—I հազ. ընթացքում։ Չծանրանալով բազմապիսի նյութերի քննության վրա, անդրադառնանք 1977 թ. պեղված №№ 10, 11 դամբարաններից հայտնաբերված իրերին, որոնք, ներկայացված լինելով մ. թ. ա. I հազ. առաջին քառորդին բնորոշ գրեթե բոլոր հիմնական նմուշներով, լույս են սփռում նաև Ախուրյանի հովտի նախնադարյան բնակչի հավատալիքների առանձին մանրամասների վրա։

Դամբարանադաշտում պեղված մյուս բոլոր դամբարանների նման, սրանք ևս գետնի մակե-

բեսին ուրվագծվում են մանր քարերի լիցքից կազմված ցածր շիրմաթմբիրով, որոնք հեռացնելուց հետո բացվում են քարարկղային կառուցվածք ունեցող դամբարանի ծածկասալերը։ Դամբարանախցերը կողմնորոշված են հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք և լցված են հողով ու քարերով, որոնց ծանրության տակ դամբարան իջեցված նյութերի մեծ մասը կոտրվել է։ Վերջիններս № 10 դամբարանում (չափերը՝ 1,30×0,85×0,45 մ) ներկայացված էին հյուսիս-արևմտյան անկյունում թափված վանակատի բեկորներով և հարավ-արևելյան պատի երկայնքով շարված խեցեղենի նմուշներով ու դրանց վրա դրված բրոնզե գոտու բեկորներով. Կմախքից պահպանված մնացորդներ կամ դիակիզման հետքեր դամբարանախցում չհայտնաբերվեցին։ Ինչ վերաբերում է № 11 դամբարանին (չափերը՝ 3,70×1,70×1,60 մ), ապա այստեղ, ի տարբերություն նախորդի, խմբակային թաղում էր կատարված։ Կմախքները հայտնաբերվեցին դամբարանի հարավային կեսում, ընդ որում երկուսը պառկած էին աջ կողքի վրա ծալած վերջույթներով, իսկ երրորդը, որ նախորդներից 10 սմ ցած էր գտնվում, կքանստած էր։ Վերջին կմախքը պառկեցված էր ձախ կողքի վրա, անմիջապես հատակին։ Նրա մոտ հայտնաբերվեցին դաշույններ, բրոնզե գոտու բեկոր, նետասլաքներ։ Ամենայն հավանականությամբ սա դամբարանի տերն է եղել, իսկ մյուսները՝ նրան ուղեկցող անձինք, քանի որ սրա մոտ հայտնաբերվեցին ոչ միայն հիմնական նյութերը, այլև ձիու կմախքը։ Երկու այլ ձիերի կմախքների մնացորդներ դրված էին դամբարանի հյուսիսային մասում, որտեղ և գտնվեցին հատած բուրգի տեսք ունեցող վանակները։ Դամբարանի արևելյան և արևմտյան պատերի մոտ հայտնաբերվեցին չորս շրջանաձև կախիկներ։ Կային նաև սև գույնի, թույլ փայլեցրած կամ անփայլ խեցանոթներ և մեկ զարդակոճակ, դաշույններ ու նետասլաքներ։ Հայտնաբերված երեք դաշույններից մեկը մ. թ. ա. I հազ. առաջին քառորդում լայն տարածված «սևանյան» տեսակի հետագա զարգացման արգասիք հանդիսացող երկաթե նմուշներից է, որի կտրվածքում ոսպնյակաձև տեսք ունեցող տերևանման շեղրի հիմնամասում պահպանված է բրոնզե դաստապանը։ Վերջինիս վերին մասում անցքեր են արված։ Երկաթե կոթունի վրա պահպանված են բազմահատված դաստակի մասերը կազմող բրոնզե գլանաձև երկու դանգվածեղ օղակներ։ Դաստակն ավարտվում է բրոնզե, կիսագնդաձև ելուստազարդ ունեցող գլխակալով (23)*։ Դաշույնների երկրորդ տեսակին (երկու օրինակ) պատկանողները նույնպես պատրաստված են



Նկ. 1

---

* Այստեղ և հետագայում փակագծում նշվող թվերը ցույց են տալիս աղյուսակի համապատասխան պատկերի համարը։

երկաթից, բայց ի տարբերություն առաջինի ունեն մահիկաձև գլխամասով ավարտվող դաստակներ, որոնց վրա պահպանված փայտիկների բեկորները և բրոնզե գամերը ցույց են տալիս, որ դրանք ունեցել են փայտե ներդիրներ։ Դժբախտաբար հայտնաբերված նմուշները թերի են պահպանված, որը թույլ չի տալիս պարզ պատկերացում կազմել դաստակի հիմնամասի ձևի վերաբերյալ։ Բացակայում է և դաշույնների երկրորդի շեղբը։ Ինչ վերաբերում է դաստակների պահպանված մասերին, ապա դրանցից մեկն ունի շրջանակավոր հանվածք (22), իսկ մյուսն ամբողջությամբ հարթ է (21)։

Հայտնաբերվել են նաև երկու երկթև նետասլաքներ։ Դրանցից բրոնզե նմուշը, որի վերին մասում հաստացող պոչուկը կոտրված է, մարտական սայրի երկու երեսներին ունի ընդերկայնական թմբիկներ՝ երկու կողմերում փոքրիկ հանվածքներով (20)։ Նետասլաքներից երկրորդը, պատրաստված լինելով երկաթից, զուրկ է կենտրոնական ընդերկայնական թմբիկներից և հանվածքներից, որի հետևանքով կտրվածքում ունի ոսպնյակաձև տեսք (19)։ Հատած բուրգի ձև ունեցող երեք բրոնզե վահանիկները, որոնք հավանաբար զրահի բաղադրյալ մասեր են հանդիսացել, կենտրոնական մասում կլոր անցքեր ունեն և դեպի ներս գոգավորված կողեր (25—27)։

Պատրաստման նրբությամբ է առանձնանում 4 սմ տրամագիծ ունեցող կոճակը։ Այն ետին մասում եռակող կամրջակով բրոնզե շրջադիր է, որում ագուցված է կիսագնդաձև տեսք ունեցող, ներմակ շաղախից պատրաստված ներդիրը (24)։

Մետաղե մյուս նյութերը զարդեր են և գործածվել են ծիսական արարողությունների ժամանակ։ Սրանք բրոնզե թիթեղից պատրաստված, երեքական համակենտրոն շրջանակներից կազմված տարբեր չափերի կախիկներ են, որոնց կենտրոնական մասում ոճավորված ցուլի գլուխ հիշեցնող գարդ է արված (28—30)։

Հարուստ տեսականիով է ներկայացված խեցեղենը։ Այստեղ առկա են սափորներ, կճուճներ, դավաթներ, քրեղաններ, թասեր և այլն։ Թվարկված խեցետեսակներից սափորները աչքի են ընկնում իրենց տարաձևությամբ։ Դրանցից են սև գույնի, անփայլ, երբեմն թույլ փայլեցրած մակերեսով, հարթ հատակով, գնդաձև իրանով, կարճ վզով և թեթևակի դուրս թեքված շուրթով, աղեղնաձև մեկ կանթանի անոթները (1), որոնցից մեկի ուսերը երկու ակոսազարդ են զոտևորում (13)։ Միականթ մեկ այլ սափոր, որն ունի թույլ փայլեցրած սև գույնի մակերես, մատնեքազարդ է (2)։ Պայմանականորեն այս խմբում ենք դասում ևս երկու անոթ, որոնցից մեկը իրանի ձևով կրկնելով նախորդներին և ունենալով սև գույնի անփայլ մակերես, երկկանթ է և ուսամասում զարդարված է գույգ ելունդազոտիներով (4)։ Երկկանթ է և անոթներից մյուսը, որի իրանը զարդարված է երկշարք դասավորված երիքական կոճականման ելուստներով, իսկ կենդանակերպ կանթերը խիստ ոճավորված են (11)։ Մյուս սափորը (№ 10 դամբարան) գնդաձև իրանով և փողաձև լայնացող վզով անկանթ անոթ է, որն ուսամասում զարդարված է հորիզոնական ակոսագծերով, իսկ իրանի վերին մասում՝ քառաշարք տարված, սանրատամ զիգզագաձև զարդով։ Փորագիր եռաշարք կետազարդեր են զոտևորում և վզի կենտրոնական մասը (8)։

Հայտնաբերված խեցանոթների շարքում մեծ թիվ են կազմում կճուճները։ Դրանցից մեկը մրածածկ, սև, անփայլ խոհանոցային անոթ է, որի գնդաձև իրանը զոտևորող ալիքաձև փորագիր գծազարդի երկու կողմից տարված են հատիկազարդեր։ Վերջիններս առկա են և շուրթի վրա (15)։ Մյուսը, որ նույնպես գնդաձև իրանով, հարթահատակ և թեթևակի դուրս փռված շուրթով, լայնաբերան, թույլ փայլեցրած, սև գույնի անոթ է, իրանի զոտկային և ուսային մասում ունի փորագիր հորիզոնական ակոսագծեր, որոնց միջև ընկած տարածությունը զարդարված է սեղմման նշանակով ստացված, խումբ-խումբ տարված ուղղահայաց կարճ ակոսագծերով (9)։ Կճուճներից հաջորդը նախորդներից տարբերվում է ինչպես իրանի գրեթե երկկոնիկ ձևով, այնպես էլ զարդով, որն այս դեպքում արտահայտված է մատնեքներով (12)։ Վերջինը փոքր, սև գույնի, անփայլ, մրածածկ անոթ է, որի գնդաձև իրանն ավարտվում է դուրս թեքված շուրթով (10)։ Շրջանակներով զարդարված կափարիչը փոքրիկ բռնակ ունի (7)։

Փոքր խմբով են ներկայացված գավաթները։ Դրանցից մեկը սև գույնի, անփայլ, միականթ անոթ է, որի իրանն ունի կորացող անցումով երկկոնիկ ձև։ Անոթը վերին մասում զարդարված է ելունդավոր հորիզոնական զարդագոտիներով (6)։ Մյուս գավաթն ավելի խոշոր է, ունի սև փայլեցրած մակերես և առանձնանում է իրանի ավելի ձգված տեսքով, որը լայն լինելով փորի մասում, թույլ գոգավորված է հիմքում։ Անոթն ավարտվում է կարճ վզով, թեթևակի դուրս թեքված շուրթով։ Դավաթի աղեղնաձև կանթը ամրացված է իրանի մատնեքազարդ կենտրոնական մասում, որը ուսամասում ունի փորագիր գծերով լցված երկու եռանկյունաձև զարդապատկեր (3)։

Դրեթե միանման նմուշներով են ներկայացված քրեղանները։ Դրանցից մեկը հարթ կտրած շուրթով, վերին մասում ուղղահայաց և ստորին կեսում կտրուկ նեղացող կողերով լայնահատակ անոթ է (17), իսկ մյուսը տարբերվում է սրանից ճկման, սեղմման եղանակով ստացված հորիզոնական ակոսագոտիներով, որոնք անոթի վերին մասի կտրվածքին ալիքաձև տեսք են տալիս։ Քրեղանը վերին մասում կեղծ կանթիկ ունի (18)։ Զևով քրեղաններից առաջինին է հիշեցնում տաշտաձև ամանը, որն ունի աղյուսագույն անփայլ մակերես։ Անոթն ավարտվում է թեք կտրած շուրթով և բերանի մասում դեպի դուրս լայնացող կողերով (16)։ Գորշագույն անփայլ մակերես ունի մեկ այլ խոշոր անոթ, որի միայն վերին մասն է դամբարան դրվել (14)։ Անոթի պահպանված հատվածի վրա առկա են զույգ կանթեր։ Հայտնաբերված խեցեղենի ուսումնասիրությունը ավարտելով նշենք, որ առանձնանում է թեյամանի ձևի անոթը, որն ունի փոքրիկ ծորակ և աղեղնաձև կանթ, ուսամասում զարդարված է չորս խորակոս զարդագոտիներով։ Վերջիններիս միջև ընկած տարածությունը լցված է մեկ շարք փորագիր թեք գծաղարգերով (5)։

Անդրադառնալով նյութերի թվագրման հարցին նկատենք, որ բոլոր տեսակները լայնորեն ներկայացված են ինչպես Հայաստանի, այնպես էլ հարևան հանրապետությունների մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող հուշարձաններում։ Այսուհանդերձ, մեզ համար առանձին կարևորություն են ներկայացնում Արարատյան դաշտում պեղվածները, որոնք անմիջապես նախորդելով կամ ժամանակակից լինելով ուրարտացիների արշավանքներին, թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ.։ Դրանց շարքում առանձնանում են Կարմիր բլուրի նախաուրարտական ժամանակաշրջանի բնակավայրում և նրան պատկանող դամբարանադաշտում հայտնաբերված նյութերը[1], որոնց ճշգրիտ զուգահեռները հայտնի են Կարմիր բլրդի մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող նյութերում[2]։ Դրանք ներկայացված են անկանթ և միականթ, մատնեքաղարդ և այլ զարդանախշեր ունեցող սև կամ դորշ գույնի անփայլ կամ թույլ փայլեցված սափորներով, հատիկազարդ և ալիքաձև գծերով զարդարված կճուճների տարատեսակներով, միականթ գավաթներով, քրեղաններով և այլ անոթներով, իսկ Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրից հայտնաբերված թեյամանաձև անոթը Շիրակավանի նմուշից տարբերվում է կանթի բացակայությամբ։

Շիրակավանի խեցեղենի զուգահեռների մյուս խումբն են կազմում Մեծամորի բնակավայրում և նրան պատկանող դամբարանադաշտում հայտնաբերված նյութերը[3], որոնց շարքում բազմաթիվ են Շիրակավանում գտնված գավաթներից, թասերից, կճուճներից և այլ նմուշներից ամենևին չտարբերվող անոթները։

Խոսելով Արարատյան դաշտի զուգահեռների մասին, հարկ է նշել նաև Դվինում հայտնաբերված նյութերը, ինչպես, օրինակ, երկկանթ սափորներն ու այլ անոթները, բրոնզե նետասլաքներ ձուլելու կաղապարները, որոնց արտադրանքը, նման լինելով շիրակավանյան նմուշին, ածխի անալիզի (նմուշը վերցված է 6,2—6,5 մ խորության վրա առկա հրդեհված շերտից) միջոցով թվագրվում է մ. թ. ա. 20±70 թթ.[4]։ Նման նետասլաքների բազմաթիվ նմուշներ են հայտնի Սևանի ավազանից, Մակարաշենից, Լենինականից և այլ վայրերից, որոնք համադրվելով Կարմիր բլուրի № 36 սենյակից գտնված, Արգիշտիի և Սարդուրի անունները կրող նետասլաքներին, թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ.[5]։

Շիրակավանից հայտնաբերված խեցանոթների նույն նմուշներն են հանդիպում նաև Կիրովականի մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող նյութեր պարունակող քարարկղային դամբարանում[6], որտեղ գտնվել է և № 11 դամբարանի երկկանթ սափորի կրկնակը։

Նույն ժամանակաշրջանով թվագրվող հուշարձաններում բազմաթիվ զուգահեռներ ունեն և դաշույները։ Այդ են վկայում Լենինականից, Կիրովականից, Աստղաձորից[7], Մուսանից[8],

---

1 Л. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961; Նույնի՝ Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

2 С. А. Есаян, Ереван (археологический очерк), Ереван, 1969, էջ 37—39, աղ. 21—26, նկ. 4։

3 Է. Խանզադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973։

4 К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, էջ 107, աղ. XXIV, XXIX։

5 Л. А. Мартиросян, Армения в эпоху бронзы, էջ 204—205, նկ. 79։

6 Г. Караханян, В. Мирзоян, Древнее захоронение с поливной керамикой, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (Հաս. գիտ.), 1976, № 11, էջ 66—74։

7 Л. А. Мартиросян, Армения в эпоху бронзы, էջ 204—225, նկ. 79_{41}, 83։

8 А. О. Мнацаканян, Археологические раскопки на осушенной территории озера Севан, СА, XXIII, էջ 185—201։

Ստեփանավանից[9], Աստղիբլուրից[10] և այլ վայրերից հայտնաբերված օրինակները, որոնք հաճախ ուղեկցվում են Շիրակավանից հայտնաբերված նետասլաքներից չտարբերվող նմուշներով։

Տրված թվագրությունը հաստատվում է և մահիկաձև գլխամաս ունեցող դաշույնների քննությամբ։ Դրանցից մեկը, ինչպես տեսանք վերևում, օժտված է շրջանակավոր դաստակով։ Նման դաստակներով և «հովհարաձև» գլխամասով ավարտվող դաշույնները, հանդիսանալով Կարմիր վանքից և Աբթիկից հայտնաբերված նմուշների զարգացած տեսակները, լայն տարածում են ստանում Հայաստանում մ. թ. ա. I հազ. սկզբից սկսած[11]։ Այդ թվագրությունը փաստարկվում է և մահիկաձև գլխամասի առկայությամբ, որի բրոնզեդարյան նմուշներն են Թալիշից (Խիշկիդերև, Ջոնի և այլն)[12], իսկ երկաթեդարյանները՝ Կույրիշևից, Նոյնմբերյանից, Թումանյանից և Աստղիբլուրի № 15 դամբարանից՝ մ. թ. ա. IX—VIII դարերին պատկանող նյութերի հետ հայտնաբերվածները։ Մ. թ. ա. I հազ. սկզբով է թվագրվում և Սպանդարյանից հայտնաբերված, նման գլխամասով ավարտվող սուրը[13]։ Այդ դաշույնները, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունների արդյունքները, հարատևում են մինչև մ. թ. ա. VI դարը[14]։

Մ. թ. ա. IX—VIII դդ. են թվագրվում և Մինգեչաուրի 4-րդ դամբարանթմբից հայտնաբերված մատնեքազարդ սափորները, թեյամանաձև անոթները, քրեղանները, նետասլաքները, շաղախով լցված կոճակները և մյուս նյութերը, որոնք չտարբերվելով Շիրակավանից գտնված իրերից[15], իրենց ճշգրիտ զուգահեռներն են գտնում Ղարաբուլաղի և Գետաբեկ-Կալաքենդի միջև գտնվող տարբեր ժամանակաշրջանների դամբարաններից հայտնաբերված ուշ շրջանի նյութերում[16]։

Կարելի է բերված զուգահեռներն ավելացնել Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ այլ հուշարձաններից հայտնաբերված, մ. թ. ա. I հազ. առաջին քառորդին պատկանող համանման նյութերով, սակայն եղածներն էլ բավական են Շիրակավանի վերը ներկայացված նյութերը մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրելու համար։ Ինչ վերաբերում է երևքական համակենտրոն շրջանակներից կազմված կախիկներին, ապա դրանք ճշգրիտ թվագրվող նյութ հանդիսանալ չեն կարող, քանի որ այդպիսիները հայտնի են նաև մ. թ. ա. XI դարի վերջով ու X դարով թվագրվող այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Վարդաքարն[17] ու Տոլորսը[18], իսկ Մինգեչաուրի 2-րդ և 5-րդ դամբարանթմբերից այդպիսիները, առանց կենտրոնական մասի ոճավորված պատկերների, հայտնաբերվել են մ. թ. ա. I հազ. սկզբով թվագրվող նյութերի հետ։ Ամենայն հավանականությամբ նման կախիկ են ձուլել և Հայրավանքի նախնադարյան բնակավայրի պեղումների ընթացքում գտնված, թերի պահպանված կաղապարի մեջ, որի հետ հայտնաբերված նյութերը թվագրվում են մ. թ. ա. I հազ. սկզբով[19]։ Թվագրության համար վճռական նշանակություն չեն կարող ունենալ և հատած բուրգի տեսք ունեցող վահանիկները, որոնք տարածված են եղել Անդրկովկասի ինչպես ուշ բրոնզի վաղ փուլի (օր. Լոռի-բերդ,

---

9 Т. С. Хачатрян, Каменные ящики Степанавана. «Աշխատություններ, ՀՊՊԹ», № 5, 1959, էջ 105—112, նկ. 38։

10 С. А. Есаян, Древняя культура племен Северо-восточной Армении, Ереван, 1976, աղ. 121։

11 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы, էջ 155—156։

12 I. de Morgan, La préhistoire Orientale, t. III, Paris, 1927, էջ 204, նկ. 198_2։

13 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, էջ 24, նկ. 6։

14 С. А. Есаян, Древняя культура племен..., աղ. 121, 140, էջ 133։ Ս. Ա. Եսայան, Հ. Ա. Հովհաննիսյան, Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի, Երևան, 1969, էջ 37։

15 Г. М. Асланов, Р. М. Вандов, Г. И. Ионе, Древний Мингечаур, Баку, 1959, աղ. XLII: О. А. Даниелян, К хронологии некоторых курганов Азербайджана, «Материальная культура Азербайджана», Баку. 1973, т. VII, էջ 112։

16 А. А. Ивановский, По Закавказью, «Материалы по археологии Кавказа», т. VI, СПб., 1911.

17 Т. С. Хачатрян, Комплекс бронзовых предметов из села Вардакар, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1961, № 3։

18 А. О. Мнацаканян, Находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре Арм. ССР, «Краткие сообщения Института истории материальной культуры» (КСИИМК), вып. LIV. 1954.

19 Հ. Հ. Մնացականյանի 1972 թ. պեղումներից։ Նյութը հրատարակված չէ։

Մադնիսչալա[20] և այլն), այնպես էլ երկաթի դարաշրջանին պատկանող հուշարձաններում և որպես արտահանված իրեր, եզակի օրինակներով հանդիպում են Թալիշում (Ջոնի, Տուլու)[21] և Իրանում (Դալեկուտի)[22], նույն ժամանակաշրջանի նյութերում են իրենց բազմաթիվ զուգահեռները գտնում նաև բրոնզե գոտիները։ Վերջիններս առավել կարևոր են նախնադարյան բնակչի հավատալիքի առանձին մանրամասները բացահայտելու տեսանկյունից, որի համար և հարկ ենք համարում հանգամանորեն անդրադառնալ դրանց զարդամոտիվների հետազոտությանը։ № 10 դամբարանից հայտնաբերված գոտու վրա (լայն. 18 սմ, հաստ. 1 մմ, վերականգնված մասի երկարությունը 80 սմ) կան երևակայական կենդանի-



ների, միմյանցից տարբեր հորինվածք ունեցող ութ պատկերախմբեր, որոնք անջատվում են փորագրման և դրվագման եղանակով ստացված երկրաչափական տարբեր ձևերի զարդապատկերներով (նկ. 2)։ Գոտու զարդարված մակերեսը երիզված է գալարապարույրներից ու ալիքաձև գծերից բաղկացած եզրազարդ ժապավեններով, որոնք շրջափակվում են անկյունաձև ու ցանցկեն գծերով լցված երեք՝ առավել նեղ ժապավեններով։ Կենտրոնում, գոտու երկայնական առանցքով, անցնում է երեք ժապավենից բաղկացած զարդագոտի, որը պատկերազարդ մակերեսը բաժանում է վերին և ներքին համաչափ մասերի։ Այս զարդաժապավենի ար-

---

[20] Н. Н. Тушишвили, Маднисчальский могильник, Тбилиси, 1972, աղ. XXXII, նկ. 186։

[21] I. de Morgan, Mission scientifique en Perse, Paris, 1896, vol. IV, նկ. 59։

[22] Namio Egami, Shinji Fukai, Seiichi Masuda, Dailaman I, The excavations at Ghalekuti and Lasulkan, 1960, Tokyo, 1965, աղ. LXXIV։

տաքին զարդերիզը կազմված է համահավասար մեծություն և հեռավորություն ունեցող, կոր գծերով իրար միացած գալարապարույրներից։ Ինչ վերաբերում է կենտրոնական ժապավենին, ապա այն արտահայտված է մանր կետագծերով երիզված, ալիքաձև գծերով լցված պատկերներով։ Այս ժապավենի երեք մասերը ևս եզրագոտու նման իրարից բաժանված են տարբեր հորինվածքի գծազարդերով լցված համեմատաբար նեղ ժապավեններով։

Կենտրոնական զարդագոտիով երկու համահավասար մասերի բաժանված գոտու վրա, իրար նկատմամբ սիմետրիկ վիճակում, պատկերված են էոնակայական կենդանիներից ու երկրաչափական մարմիններից բաղկացած 4 կենդանախմբեր, որոնք միմյանցից անջատված են վերևից ներքև իջնող գիգզագաձև գծերով լցված տարածություններով։ Գոտու աջակողմյան ծայրամասը զարդարում են փոքրիկ քառանկյուններով արված շախմատաձև երկու դաշտ, որոնք կենդանապատկերներից սահմանազատվում են ուղղահայաց ընթացող գալարապարույրներով, անկյունաձև գծերով լցված ժապավենով ու կետերից կազմված եռանկյուններով։ Ցավոք, ներկայացվող գոտու մյուս ծայրը բացակայում է. հավանաբար, այն ևս ունեցել է նույնանման տեսք։ Նկատենք, որ գոտու եզրերին բացակայում են կապելու կամ ամրացվելու համար նախատեսված անցքերը։ Հայաստանում և Անդրկովկասում գտնված բրոնզե գոտիների վրա երբեմն լինում են միջանցիկ փոքրիկ անցքեր, որոնք ծառայել են վերոհիշյալ նպատակին։ Թերևս անցքեր չունեցող գոտիները, ինչպիսին է և Շիրակավանից գտնվածը, օգտագործվել են բնիկներին հայտնի հատուկ եղանակներով։

Վերադառնալով գոտու զարդանախշերի ուսումնասիրությանը, նշենք, որ նրա վերին և ներքին մասերի մնացած տարածություններում պատկերված են կենդանիների խմբեր, որոնցից չորսում առկա են երկու, իսկ մյուսներում՝ երեքական կենդանիներ։ Վերին շարքում աջից առաջինը իրար ետևից գնացող, գլուխները առաջ պահած երկու միանման կենդանիներ են, որոնց բաց երախներում երևում են սրածայր լեզուներն ու սուր ատամները։ Մանր կետերով ու հինգ փոքրիկ օղակներով պատված կենդանիների դինամիկ մարմինները հենված են արտակարգ բարակ ու փափուկ ծալված վերջույթների վրա։ Նրանց ականջները վեր են ցցված և ավարտվում են ներքև հակված սրվող ծայրերով, իսկ վեր բարձրացված պոչերը օձագալար են։ Իրար ետևից գնացող զույգ կենդանիներից աջ կողմինի առջևում պատկերված են յոթ պարույրաձև ելուստներով պսակազարդ համակենտրոն շրջանակներ, իսկ սրանցից ցած՝ չորս հավասարասրուն եռանկյունիների միջոցով ստացված քառաթև խաչ, որի թևերի ծայրերն ավարտվում են փոքրիկ գնդիկներով։ Կենդանապատկերի այս հատվածում ներկայացված երկրաչափական մարմինները շրջանակը և քառաթև խաչը, հավանաբար խորհրդանշում են երկնային լուսատուների, որոնց իմաստանշանները նախնադարի կրոնամիստիկական պատկերացումներում կապվում են կենդանիների և լուսատուների միջև եղած հարաբերությունների հետ։ Այս տեսակետից ուշագրավ է Եզնիկ Կողբացու կողմից հեթանոսական հավատալիքների մերժման կապակցությամբ արևի հեթանոսական պատկերացումների նկարագրությունը։ Նա գրում է. «Եւ այնու կենդանութեամբ, ասեն, ամենայն արարածք զնորա բնութենեն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան։ Եւ ինքն մի է և բաղում, և բազում է և մի. որպէս արեգակն մի է և բազում, զի մի անիվ է և բազում ճառագայթք»[23]։

Հայ ժողովրդական հավատալիքները և անցյալի կրոնական պատկերացումներն արտահայտող ավանդություններում ու զրույցներում ևս կան հետաքրքիր և շատ արժեքավոր բանահյուսական հատվածներ, որոնք նպաստում են երկնային լուսատուների պատկերման նախնադարյան ձևերի բացահայտմանը։ Իրոք, Դ. Սրվանձտյանի կողմից գրի առնված հայ ժողովրդական բանահյուսության մի հետաքրքիր և արժեքավոր պատառիկում կարդում ենք. «Արևու անձն՝ ջաղցի ջրտան ճախրին կամ գունդին ձև ունի, որ ղլորվելով կը դառնա ու կրնթանա, և այդ գունդի փառերեն լուսո ճառագայթներ կը ցոլանան, ինչպես ջուրի ցնցուղը ջաղցի գունդենն»[24]։ Մեջբերված ավանդության պատառիկը կարծես նկարագրում է մեր գոտու վրա եղած շրջանաձև պատկերը։

Կենդանիների արտակարգ երկար օձաձև պոչերը խորհրդանշում են ջրի գաղափարը։ Այս տեսակետից ուշագրավ են Դեղամա լեռների ժայռապատկերներում ու Հայաստանի նախնադարյան արվեստի այլ հուշարձաններում օձաձև գալարներ կամ ալիքաձև ձևավորում ունեցող կենդանիների մարմինների մասերի պատկերները։ Դեղամա լեռների ժայռապատկերներում առկա

---

23 Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1926, էջ 203—204։

24 Դ. Սրվանձտյան, Դրոց-բրոց, Կ. Պոլիս, 1877, էջ 109։ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական հավատքը, տե՛ս «Երկերի լիակատար ժողովածու», հատ. Է, Երևան, 1975, էջ 40։

են օձանման կամ ալիքով ձևավորված այծի եղջյուրներ կամ վերջույթներ, իսկ մեկ այլ նկարում գալարներով պատկերված են այծի մեջքն ու պոչը։ Օձագալար մարմին և վերջույթներ ունի նաև ցուլը[25]։ Հայտնի է, որ թվարկված կենդանիները կապվում են ջրի պաշտամունքի, շանթամարդի և երկնային այլ երևույթների հետ, որոնք, վերջին հաշվով, արտահայտում են բարեբերության գաղափարը։

Վերին մասի հաջորդ կենդանապատկերում ներկայացված են երկու իրար ետևից գնացող և մեկ նստած կենդանի։ Երևակայական կենդանիներից աջակողմյանը պատկերված է գլուխը ետ շրջած վիճակում, բաց երախով, ականջներն ու պոչը վեր ցցած։ Կենտրոնի կենդանին ունի նույն ձևի մարմին, գլուխը, ի տարբերություն առաջինի, ուղիղ է, իսկ պոչը՝ օձագալար։ Նրա առջև պատկերված է գեղեցիկ, աղեղնաձև, բազմաճյուղ երկու եղջյուրներով, ալիքաձև ցած ծալված պոչիկով, գետնին նստած մի կենդանի, որի գլուխը եղնիկի է։ Երևակայական գիշատչատիպ կենդանիների միջավայրում եղնիկի պատկերումը Հայաստանի նախնադարյան արվեստի հուշարձաններում պատահական չէ։ Նման պատկեր գոյություն ունի նաև Կամոյից գտնված բրոնզե գոտու վրա[26]։ Մեր գոտու վրայի կենդանու եղնիկ լինելը հաստատվում է նրա եղջյուրների բազմաթիվ ելուստներով ու պատկերի այն նմանությամբ, որը դրսևորվում է Ախթալայից[27], Աստղիբլուրից[28] հայտնաբերված գոտիների ու Գեղամա լեռների ժայռապատկերներում[29] հանդիպող եղնիկների եղջյուրների հետ համեմատելիս։ Եղնիկի պատկերը մեկնաբանելու գործում արժեքավոր են Ջավախքի հայ ժողովրդական հավատալիքներում եղած պատկերացումները ուշապ-վիշապների մասին։ «Փոքրիկ թարթառները, որ Երբեմն գոյանում են Ախայքալակի լճերի վրա, կոչվում են ուշապ։ Ժողովրդի կարծիքով ուշապը մի սարսափելի վիշապ է, որը շղթաներով կապված է երկնքից, գլուխը վեր, պոչը վայր։ Սա գոյանում է եղնիկից։ Երբ եղնիկը ծնում է, մայրը թողնում է, մի ժամվա ճանապարհ փախչում է, ուշապները սրան երկինք են քաշում, ուր մեծանալով նա էլ դառնում է ուշապ։ Իսկ եթե չիդան, երեք ժամ հետո սա վեր է. ելնում, կանգնում, այս ժամանակ մայրը տեսնում գալիս պահում է»[30]։ Ինչպես տեսնում ենք ժողովրդական հավատալիքներում վիշապ է դառնում նաև եղնիկը. հետևաբար, մեր պատկերախմբում ներկայացված կենդանիները ոչ այլ ինչ են, եթե ոչ տարբեր պատկերներով արտահայտված վիշապ-եղնիկներ, որոնց պաշտամունքը կապվում է երկնային երևույթների ու ծովերի հետ։ Այդ են ապացուցում նաև եղնիկների պոչերի օձագալար տեսքը, նրանց շուրջը եղած վերևից ներքև իջնող գծերը և երկրաչափական պատկերները, որոնք անձրևն են խորհրդանշում։

Վերին մասի երրորդ կենդանախումբը ներկայացված է նույն տիպի կենդանիներով, որոնցից աջակողմյանը ունի վեր ցցված, ծայրի մասում աղեղնաձև պոչ, իսկ ձախակողմյանը առանց պոչի է։ Այս երկուսի արանքում տեղավորված են հավասարասրուն եռանկյունիների և շեղանկյունիների միջոցով պատկերված երեք խաչեր, որոնց թևերի ծայրերը ավարտվում են փոքրիկ գնդիկներով։ Պատկերն ամբողջությամբ թռչնի երամի տպավորություն է թողնում և ունի գոտու հորիզոնական առանցքի նկատմամբ թեք ուղղվածություն։ Խաչերի շարքից աջ, ճիշտ աջակողմյան կենդանու գլխի դիմաց աղեղնաձև բացված թևերով, շեղանկյունի մարմնով, եռանկյունաձև փոքր գլխիկով ու պոչով ոճավորված թռչուն կա։ Նրա աչքերն արտահայտված են գլուխը պատկերող եռանկյան երկու կողմերում տեղավորված փոքրիկ կետերով, իսկ ոտքերը՝ պոչի և իրանի միացման հատվածի երկու կողմերում գծված կիսաօղակներով։ Թռչնապատկերը շրջապատված է մանր գծերով արված ճառագայթաձև լուսապսակով։ Թռչունը խիստ դինամիկ վիճակում է և կարծես խոյահարում է դիմացի վիշապ-կենդանուն։ Նրանից ցած, ինչպես առաջին կենդանապատկերում, կա քառաթև խաչ։ Առաջին և երրորդ կենդանապատկերների միջև եղած մանրամասները համադրելու ընթացքում նկատում ենք, որ առաջինում արտահայտված արևի սկավառակը երրորդում փոխարինված է նույն լուսատուի մեկ այլ խորհրդանիշով՝ թռչունով։ Նման պատ-

25 Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը, Երևան, 1973, էջ 21, 22, նկ. 10։

26 А. О. Мнацаканян, Археологические находки в селении Басаргечар Арм. ССР. КСИИМК, 1955, № 60.

27 I. de Morgan, Mission selentifique au Caucase, vol. I, նկ. 190։

28 С. А. Есаян, Древняя культура племен..., էջ 241։

29 Հ. Ա. Մարտիրոսյանի չհրատարակված նյութերից։

30 «Ազգագրական հանդես», գիրք Ա, Շուշի, 1895, էջ 351։

կեր կարելի է տեսնել նաև Սևանի ավազանից Ե. Լալայանի հայտնաբերած գոտու վրա[31]։

Վերին շարքի երրորդ կենդանախմբից ձախ նշմարվում են վերևից ներքև իջնող, ալիքաձև գծերով լցված, «թռչունների նրամ» հիշեցնող պատկերի մի հատված և կենդանու ոտքեր։

Գոտու պատկերազարդ մակերեսի ստորին մասում ևս, վերինի նման, կան նույն տիպի երևակայական կենդանիների չորս խմբեր, որոնցից աջ կողմից առաջինում պատկերված են օձագալար պոչիկներ ունեցող զույգ կենդանիներ։ Ի տարբերություն վերին պատկերի, այստեղ առջևի կենդանու բաց երախի դիմաց տեղադրված է «թռչնաշարք», իսկ ետևի կենդանու մեջքին՝ քառաթև խաչ։ Առջևի կենդանու դիմաց եռանկյունիների և շեղանկյունիների միջոցով ստեղծված պատկերի թռչնաշարք լինելը հաստատվում է նաև նրանով, որ մարմինների և պոչերի միացման տեղերում կան զույգ կետեր, ինչպես վերին երրորդ կենդանախմբում և Տլիից գտնված բրոնզե գոտու վրա եղած երեք թռչունների պատկերներում[32]։ Նույնպիսի մարմիններ ենք տեսնում Կամոյից գտնված գոտու վրայի երևակայական կենդանիների մեջքերին[33] և Լճաշենի նմուշի վրա[34]։ Թռչունների մարմինները եռանկյան և շեղանկյան միջոցով արտահայտելը բնորոշ է նաև խեցանոթների զարդարանքների ոճին։ Ամպրոպի մասին եղած զրույցներում տարբեր մարմնավորում ունեցող վիշապները, որպես կանոն, երկրից են տարվում դեպի երկինք։ Այնտեղ նրանք կռվի են բռնվում արեգակի հետ և ի վերջո պարտվելով նրանից՝ մասերի վերածված ընկնում են երկրի վրա[35]։ Թվում է, թե կենդանիների դիմաց պատկերված «թռչնաշարքերը» մարմնավորում են այն ուժերը, որոնք պետք է երկինք բարձրացնեն վիշապներին։

Ստորին շարքի ձախից երրորդ կենդանախումբը կրկնում է վերինը։ Փոքր-ինչ տարբեր է



Նկ. 2

31 Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 176—177։

32 Б. В. Техов, Раскопки Тлийского могильника в 1960 г., СА, 1963, № 1, էջ 172, նկ. 9։

33 А. О. Мнацаканян, Археологические находки в селении Басаргечар, էջ 43, նկ. 14։

34 С. А. Есаян, А. О. Мнацаканян, Бронзовые пояса из Лчашена и Степанавана, «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 3, էջ 276—281։

35 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական հավատքը, էջ 65—69։

երկրորդ կենդանախումբը։ Այստեղ կենդանիների միջև տեղադրված են խաչեր, իսկ ձախակողմյան կենդանու բաց երախի առջև՝ թռչունների շարք։ Երրորդ և չորրորդ կենդանապատկերները մյուսների նման իրարից բաժանվում են զիգզագաձև գծերի խմբերով։ Վերջին կենդանախումբը խիստ բայքայված է, բայց ինչպես երևում է պահպանված բեկորներից, հիշեցնում է աջից երկրորդ պատկերը։

Շիրակավանից հայտնաբերված մյուս գոտին թերի է (նկ. 1)։ Այն ներկայացնում է 20 սմ երկարությամբ, 18 սմ լայնությամբ և 1 մմ հաստությամբ բրոնզե թիթեղ, որի մակերեսը նախորդի նման զարդարված է երևակայական կենդանիների ու երկրաչափական մարմինների պատկերներով։ Ինչպես վերը նկարագրած գոտու վրա, այնպես էլ այստեղ առկա են գալարապարույրների երեք շարքից բաղկացած շերտեր, որոնցից մեկն անցնում է կենտրոնով, իսկ մյուսները՝ եզրերով։ Կենտրոնական զարդաժապավենով երկու հավասար մասերի բաժանված մակերեսին պատկերված են երևակայական կենդանիների գլուխների երկու շարքեր։

Վերինում ներկայացված կենդանիներն ունեն բաց երախներ, սուր լեզուներ։ Գլուխները ծածկված են մանր կետերով, իսկ աչքերն արտահայտված են ոչ մեծ շրջանակներով։ Այստեղ ներկայացված կենդանիները իրենց տեսքով և արտահայտման ոճով նման են նախորդ գոտու կենդանիներին, այն տարբերությամբ, որ սրանք մեծ ականջներ չունեն։ Կենդանիներից վերև, զարդաժապավեններից մեկում արված են ալիքաձև պատկերներ, որոնք կարող են արտահայտել ջուրը կամ խորհրդանշել կենդանու միջավայրը։ Նկատենք, որ այս պատկերների մակերեսներն էլ կենդանիների նման ծածկված են մանր կետերով։ Ստորին շարքի կենդանիների գլուխները իրենց տեսքով նման են վերևում ներկայացվածներին։ Սրանք ունեն ցած հակված ծայրերով ականջներ կամ եղջյուրներ հիշեցնող փոքրիկ ելուստներ։ Կենդանագոտուց ցած պատկերված է ալիքներ խորհրդանշող զարդագոտի։

Երկու գոտիների վրա էլ կենդանիների և երկրաչափական զարդերի հորինման հնարանքները նույնն են. տարբերությունը նրանց ձևի, ոճի և սյուժեի արտահայտման մեջ է։ Երկրորդ գոտու վրա եղած երևակայական կենդանիները իրենց շրջապատող միջավայրում կապվում են ջրի պաշտամունքի հետ և դրսևորում են նախնադարյան բնապաշտների առասպելականացված պատկերացումները երկնային և երկրային ջրերի, «ժիրանի ծովերի» ու նրանցում բնակվող կենդանիների՝ վիշապների մասին։

Գոտիների բեկորների վրա պատկերված կենդանիները իրենց նմանակներն ունեն Հայաստանի վաղ երկաթի դարաշրջանի կիրառական արվեստի այլ նմուշներում[36]։ Գալարապարույրներով երիզված միստիկ սյուժեներով բրոնզե գոտիներ են հայտնաբերված նաև Հայաստանի այլ հնավայրերից։ Գալարապարույրները ճանաչված են որպես ժամանակը, անվերջությունը և հավերժությունը խորհրդանշող պատկերներ[37]։

Այսպիսով, ներկայացված գոտիների վրա մեծ հմտությամբ պատկերվել է երկու և երեքական կենդանիներից ու երկրաչափական մարմիններից բաղկացած որոշակի սյուժե, որն անկասկած արտահայտում է բնիկների կրոնապաշտամունքային պատկերացումները՝ վերարտադրված նախնադարյան կիրառական արվեստի միջոցով։

Պատմ. գիտ. թեկնածու Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ,
Պատմ. գիտ. թեկնածու Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ
Լ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

36 А. Мнацаканян, Археологические находки в селении Басаргечар, էջ 43։

37 Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965։

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ ԴՎԻՆՈՒՄ

1978 թ. Դվինի կենտրոնական թաղամասում անտիկ դարաշրջանի շերտագրական պատկերը պարզելու և ուսումնասիրելու նպատակով պեղվեց միանավ բազիլիկ եկեղեցուց հարավ և դրան զուգահեռ՝ 5×10 մ մակերեսով մի հատված։ Այստեղ բացվեց մոտավորապես 50 սմ միջին հզորության շերտ, հելլենիստական խեցեղենով հարուստ, որի տակ նկատելի էին մ. թ. ա. IX—VIII դդ. քարե ճարտարապետական շինվածքի հետքեր՝ համապատասխան նյութերով։ Հելլենիստական ժամանակաշրջանի շերտում հայտնաբերվեց կարասային թաղում։ Կարասը գտնվում էր հորիզոնական դիրքում՝ մեծ ու խոր տաշտով ծածկված բերանը դեպի արևելք։ Զկային միայն նատուկի և իրանի որոշ բեկորներ, որոնք ջարդոտված վիճակում ընկած էին հենց կարասի մեջ։ Զնայած նատուկի պակասող մասերը չգտնվեցին, սակայն ելնելով անոթի ընդհանուր ձևից և համեմատելով նմանատիպ կարասների հետ, ենթադրվում է, որ դրա դուրս ցցված զանգվածեղ շուրթը և հաստապատ, ուռուցիկ իրանը հենվել են տափակ